



**ԵՐԵՎԱՆԻ ՄԵԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

Հաստատվել է

ԵՊԲՀ Գիտական խորհրդի 30.09.2014
թվականի թիվ 01 որոշմամբ,
Գիտական խորհրդի 26.02.2020 թվականի
թիվ 20-02-03-11 որոշմամբ հաստատված
փոփոխություններով և լրացումներով

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Ուսման վճարի փոխհատուցման մասին» կանոնակարգով սահմանվում է Համալսարանի բարձրագույն կրթության վճարովի համակարգի ուսանողների, հետբուհական կրթության կլինիկական օրդինատորների ուսման վճարի չափերի լրիվ կամ մասնակի փոխհատուցման՝ գեղջման կանոնները և պայմանները:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի թիվ ՀՕ-297 օրենքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՀՕ-62-Ն օրենքը, ՀՀ Կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը», «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կրթության և գիտության նախարարի 17.11.2011 թվականի թիվ N 1242-Ն հրամանը, ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված Համալսարանի կանոնադրությունը, սույն կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

3. Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով Համալսարան ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն

ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաև օրենսդրությամբ և սույն կանոնակարգով նախատեսված սովորողներին:

4. Սույն կանոնակարգով նախատեսված գեղչեր ունեցող ուսանողներին պետական կրթաթոշակի տրամադրման կարգը և չափը սահմանում է Հայաստանի Կառավարությունը:

5. Հայաստանի օրենսդրությամբ և սույն կանոնակարգով նախատեսված ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման մասին որոշումներն ընդունում է Համալսարանի «Ուսման վճարների փոխհատուցման հանձնաժողովը» (այսուհետ՝ Հանձնաժողով), որը կազմավորվում է ռեկտորի հրամանով:

6. Սույն կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) *Բարձրագույն կրթության ուսանողի ուսման վճարի լրիվ կամ փոխհատուցում*՝ պետական բյուջեի ֆինանսավորմամբ և (կամ) Համալսարանի ֆինանսական հատկացումների հաշվին տրվող գեղչ:

2) *Կլինիկական օրդինատորի ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում*՝ Համալսարանի ֆինանսական հատկացումների հաշվին տրվող գեղչ:

3) *Միջին որակական գնահատական* (ՄՈԳ)՝ Համալսարանում ուսումնառության ընթացքում գնահատականների կրեդիտներով կշռված միջին, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)՝ ՄՈԳ=ՎՄ/ԳԿ:

ՎՄ՝ «Վարկանիշային միավոր», բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումարն է:

ԳԿ՝ «Գնահատված կրեդիտը» գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով:

Միջին որակական գնահատականը արտացոլում է տվյալ կրթական ծրագրի բոլոր այն դասընթացների կամ ուսումնական մոդուլների կրեդիտները, որոնք ավարտվում են քննությամբ:

Սույն կանոնակարգով նախատեսված գեղչի տրամադրման ժամանակ հաշվի է առնվում նաև մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտք ունեցող ուսանողների նախորդ ուսումնական տարում ձևավորված միջին որակական գնահատականը:

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ
ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ**

7. Փոխհատուցումներն ուսանողի առաջադիմության հիմքով (փոխատեղում)

1) Պետությունը տրամադրում է ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ մեկ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող Հայաստանի պետական բուհերի ընդունելության կանոններով միասնական կարգով ընդունված ուսանողներին, մրցութային հիմունքներով, կրթաթոշակի վճարմամբ, հետևյալ կարգով՝

ա) առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով Համալսարան ընդունված ուսանողներին.

բ) 2-րդ և հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով (սույն դրույթի իմաստով ուսանողն ունի «Բարձր առաջադիմություն» ունեցող ուսանողի կարգավիճակ, եթե ուսման վճարի լրիվ փոխհատուցման նպաստի մրցույթի ժամանակ ունի համապատասխան ռեյտինգային միավորներ և ստուգարքներն ու քննությունները հանձնել է մինչև մարման շրջանը կամ Համալսարանի իրավական ակտերով սահմանված այլ դեպքերում).

գ) ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում՝ երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:

2) Վճարովի ուսուցման համակարգում վերականգնված ուսանողը կարող է մասնակցել ուսանողական նպաստի հատկացման (փոխատեղման) համար անցկացվող մրցույթին առնվազն մեկ ուսումնական տարի սովորելուց հետո: Ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ուսումնառությունը կարող են շարունակել Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգավիճակ ունեցող ուսանողները:

8. Փոխհատուցումները սոցիալական հիմքերով

1) Պետությունը տրամադրում է ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ օրենքով նախատեսված հետևյալ սոցիալապես անապահով խմբերին՝

ա) առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց մինչև 23 տարին լրանալը՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, կրթաթոշակի վճարմամբ.

բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող (մինչև 18 տարեկան) անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, կրթաթոշակի վճարմամբ¹.

գ) Ժամկետային զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի, կրթաթոշակի վճարմամբ՝ մինչև ուսումնառության ավարտը:

2) Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ խմբերին՝

ա) մինչև 5 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50 տոկոսի չափով,

բ) 5-10 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով,

գ) 10-15 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 70 տոկոսի չափով,

դ) 15-20 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 80 տոկոսի չափով,

ե) 20-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 100 տոկոսի չափով:

3) Պետության կողմից սոցիալական հիմքերով փոխհատուցումների դեպքերում ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանում է Հայաստանի Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

4) Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի

¹ **Ծանոթություն.** «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի համաձայն՝ նախկինում հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող և 3-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ ունեցող ուսանողները կարող են օգտվել յրիվ փոխհատուցման իրավունքից, եթե ուսումնառության ընթացքում՝ բժշկասոցիալական վերափորձաբնության արդյունքներով 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակը փոխարինվել է 3-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակով

վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը յուրաքանչյուր տարի Համալսարանին է ներկայացնում մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 10-ը:

5) Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է Հայաստանի Կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման թիվ 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքներում, ինչպես նաև Տավուշի մարզի Բերդի համայնքում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվող ու տվյալ համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունն ավարտած և Հայաստանի Հանրապետության պետական կամ հավատարմագրված ոչ պետական բուհերի համապատասխան ուսուցման ձևերով (առկա, հեռակա) բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով (այդ թվում՝ անընդհատ ու ինտեգրացված կրթական ծրագրերով) ուսանողների հետևյալ խմբերին՝

ա) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով գերազանց առաջադիմություն ունեցողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով.

բ) անկախ առաջադիմությունից՝ ուսման վճարի 30 տոկոսի չափով:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ

9. Փոխհատուցումներն ուսանողի առաջադիմության հիմքով (փոխատեղման մրցույթի արդյունքներով)

Ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում 50 տոկոսի չափով տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0,1 միավոր տարբերությամբ:

10. Փոխհատուցումները սոցիալական և այլ հիմքերով

1) Համալսարանը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝

ա) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոս՝ տվյալ ուսումնական տարվա համար, եթե ուսանողը հաղթահարել է միջին որակական գնահատականի (ՄՈԳ) 70 տոկոս շեմը.

բ) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին՝ 80 տոկոս՝ մինչև տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ավարտը, անկախ ՄՈԳ-ից.

գ) 23 տարին չլրացած միակողմանի ծնողագուրկ (միածնող) ուսանողներին՝ 50 տոկոս՝ տվյալ ուսումնական տարվա համար կամ մինչև հանգամանքի վերանալը, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը.

դ) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոս՝ մինչև հանգամանքի վերանալը, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը.

ե) երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոս, մինչև հանգամանքի վերանալը, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը.

զ) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ 30 տոկոս, տվյալ ուսումնական տարվա համար, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը.

է) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ 40 տոկոս՝ տվյալ ուսումնական տարվա համար, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 50 տոկոս շեմը.

ը) 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս, մինչև ուսումնառության ավարտը, անկախ ՄՈԳ-ից.

թ) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 20 տոկոս, տվյալ ուսումնական տարվա համար, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը.

ժ) չարորակ նորագոյացությամբ հիվանդություններ ունեցող ուսանողներին՝ 100 տոկոս, անկախ ՄՈԳ-ից՝ մինչև ուսումնառության ավարտը:

2) Համալսարանի կողմից տրամադրվող փոխհատուցումները Համալսարանի աշխատողների երեխա ուսանողների համար

Համալսարանի միջոցներից՝ Համալսարանում երկարամյա աշխատանքային ստաժ ունեցող առկա աշխատողների համար սահմանվում են խրախուսման կանոններ՝ աշխատողների մինչև 25 տարեկան ուսանողների ուսման վճարների մասով, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը:

Համալսարանի առկա աշխատողների երեխա հանդիսացող ուսանողների ուսման վճարը փոխհատուցվում է հետևյալ չափերով՝

ա) Համալսարանում 10-ից մինչև 15 տարի աշխատողների երեխաների համար 30 տոկոսի չափով՝ մեկ ուսումնական տարով.

բ) Համալսարանում 15-ից մինչև 20 տարի աշխատողների երեխաների համար 50 տոկոսի չափով՝ մեկ ուսումնական տարով:

գ) Համալսարանում 20 և ավելի տարիներ աշխատողների երեխաների համար 80 տոկոսի չափով՝ մեկ ուսումնական տարով:

Աշխատողների ԵՊԲՀ-ում աշխատանքային ստաժը հաշվարկվում է անկախ ԵՊԲՀ-ում նախկինում ստաժի ընդհատման հանգամանքից:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐՊԻՆԱՏՈՐՆԵՐԻՆ **ՏՐՎՈՂ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ**

11. Փոխհատուցումները Համալսարանի կլինիկական օրդինատորների համար

1) Համալսարանի միջոցներից ուսման վճարի փոխհատուցումներ տրամադրվում են՝

ա) առանց ծնողական խնամքի մնացած կլինիկական օրդինատորներին՝ 80 տոկոս՝ մինչև կլինիկական օրդինատորի ուսումնառության ավարտը:

բ) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած կլինիկական օրդինատորներին՝ 40 տոկոս, եթե կլինիկական օրդինատորն ունի բավարար առաջադիմություն՝ ամբողջ ուսումնառության համար:

գ) 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից կլինիկական օրդինատորներին՝ առնվազն 50 տոկոս, անկախ առաջադիմությունից, ամբողջ ուսումնառության համար:

դ) զոհված զինծառայողի երեխա-կլինիկական օրդինատորներին՝ առնվազն 80 տոկոս, եթե կլինիկական օրդինատորն ունի բավարար առաջադիմություն՝ ամբողջ ուսումնառության համար:

ե) չարորակ նորագոյացությամբ հիվանդություններ ունեցող կլինիկական օրդինատորներին՝ 100 տոկոս, անկախ առաջադիմությունից՝ ամբողջ ուսումնառության համար:

2) Համալսարանի կողմից տրամադրվող փոխհատուցումները Համալսարանի աշխատողների երեխա կլինիկական օրդինատորների համար

Համալսարանի միջոցներից՝ Համալսարանում երկարամյա աշխատանքային ստաժ ունեցող առկա աշխատողների համար սահմանվում են են խրախուսման կանոններ՝ աշխատողների մինչև 25 տարեկան սովորողների ուսման վճարների մասով:

Համալսարանի առկա աշխատողների երեխա հանդիսացող կլինիկական օրդինատորների ուսման վճարը փոխհատուցվում է հետևյալ չափերով՝

ա) Համալսարանում 10-ից մինչև 15 տարի աշխատողների երեխաների համար 30 տոկոսի չափով՝ մեկ ուսումնական տարով:

բ) Համալսարանում 15-ից մինչև 20 տարի աշխատողների երեխաների համար 50 տոկոսի չափով՝ մեկ ուսումնական տարով:

գ) Համալսարանում 20 և ավելի տարիներ աշխատողների երեխաների համար 80 տոկոսի չափով՝ մեկ ուսումնական տարով:

Աշխատողների ԵՊԲՀ-ում աշխատանքային ստաժը հաշվարկվում է անկախ ԵՊԲՀ-ում նախկինում ստաժի ընդհատման հանգամանքից:

ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

12. Բարձրագույն կրթության ուսանողների դիմումների ներկայացման ժամկետները

1) Ուսանողների ուսման վճարի փոխհատուցում ստանալու մասին դիմումներն ընդունվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա առաջին կիսամյակի օգոստոսի 16-ից մինչև սեպտեմբերի 15-ը կամ սույն կանոնակարգով նախատեսված այլ ժամկետներում:

2) Ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի մեկնարկին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում, հունվարի 19-ից մինչև փետրվարի 15-ը Համալսարանի կողմից տրվող ուսման վճարի փոխհատուցում ստանալու մասին դիմումներ կարող են ներկայացնել՝

ա) առաջին կուրսի ուսանողները՝ երկրորդ կիսամյակի համար, առաջին կիսամյակի ՄՈԳ-ի արդյունքների հիման վրա, եթե սույն կանոնակարգով տվյալ գեղչի հանգամանքի համար ՄՈԳ-ի արդյունքները պարտադիր են.

բ) առաջին կիսամյակում դիմումը սահմանված ժամկետում չներկայացրած ուսանողները՝ երկրորդ կիսամյակի համար, նախորդ ուսումնական տարվա ՄՈԳ-ի արդյունքների հիման վրա, եթե սույն կանոնակարգով տվյալ գեղչի հանգամանքի համար ՄՈԳ-ի արդյունքները պարտադիր են.

գ) ժամկետային զինվորական ծառայությունից հետո վերականգնված և ուսումնառությունը շարունակող ուսանողները՝ երկրորդ կիսամյակի համար:

3) Առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդից կամ հղիության ու ծննդաբերության արձակուրդից կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդից հետո վերականգնված և ուսումնառությունը շարունակող ուսանողները դիմումներ կարող են ներկայացնել՝ վերականգնման օրվանը հաջորդող ժամանակահատվածի համար, մինչև սույն կանոնակարգով տվյալ գեղչի հանգամանքի համար նախատեսված ժամկետի ավարտը:

4) Համալսարանում կցագրված անձինք, ուսման վճարի փոխհատուցում կարող են ստանալ սույն կանոնակարգի 14-րդ կետով սահմանված դեպքերում՝ սույն կանոնակարգի 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված ժամկետներում: (*փոփոխություն՝ 26.02.2020, թիվ 20-02-03-11*)

13. Կլինիկական օրդինատուրայում սովորողների դիմումների ներկայացման ժամկետները

1) Կլինիկական օրդինատորների ուսման վճարի փոխհատուցում ստանալու մասին դիմումներն ընդունվում են Համալսարանում կլինիկական օրդինատորի ընդունելության օրվանը հաջորդող երկու շաբաթների ընթացքում կամ սույն կանոնակարգով նախատեսված այլ ժամկետներում:

2) Կլինիկական օրդինատորի ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի մեկնարկին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում Համալսարանի կողմից տրվող ուսման վճարի փոխհատուցում ստանալու մասին դիմումներ կարող են ներկայացնել՝

ա) առաջին կիսամյակում դիմումը սահմանված ժամկետում չներկայացրած կլինիկական օրդինատորները՝ երկրորդ կիսամյակի համար:

բ) ժամկետային զինվորական ծառայությունից հետո վերականգնված և ուսումնառությունը շարունակող կլինիկական օրդինատորները՝ երկրորդ կիսամյակի համար:

3) առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդից, հղիության ու ծննդաբերության արձակուրդից, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդից հետո վերականգնված և ուսումնառությունը շարունակող կլինիկական օրդինատորները՝ մինչև սույն կանոնակարգով տվյալ զեղչի հանգամանքի համար նախատեսված ժամկետը: *(փոփոխություն՝ 26.02.2020, թիվ 20-02-03-11)*

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՅԼ ԿԱՆՈՆՆԵՐ

14. Համալսարանում կցագրված անձինք, ուսման վճարի փոխհատուցում կարող են ստանալ առաջին կամ երկրորդ կիսամյակում ուսանողի կարգավիճակ ստանալու դեպքում և ուսանողի կարգավիճակով մեկ կիսամյակ ուսումնառելու և այդ կիսամյակում սույն կանոնակարգով նախատեսված ՄՈԳ-ը ձևավորելու դեպքում՝ սույն կանոնակարգի 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված ժամկետներում: *(փոփոխություն՝ 26.02.2020, թիվ 20-02-03-11)*

15. Ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդի, հղիության ու ծննդաբերության արձակուրդի, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդի հիմքերով ուսումնառությունն ընդհատած ուսանողը և կլինիկական օրդինատորը վերականգնվելիս պահպանում են մինչև կրթության ընդհատումն ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

16. Ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում Համալսարանի կողմից տրամադրվող զեղչը փոփոխվում է:

17. Ուսման վճարի զեղչի համար հիմք հանդիսացող հանգամանքի փոփոխության կամ նոր հանգամանքի առաջացման դեպքերում տրամադրվող զեղչը փոփոխվում է ուսանողի կամ կլինիկական օրդինատորի դիմումի հիման վրա կամ փոփոխվում կամ դադարեցվում է Հանձնաժողովի որոշմամբ:

18. Սույն կանոնակարգը չի տարածվում՝

ա) Համալսարանի ինտերնատուրայում սովորողների վրա:

բ) երկրորդ մասնագիտություն ստացող կլինիկական օրդինատորների վրա.

գ) ինտերնատուրայից հետո երկրորդ մասնագիտություն ստացող կլինիկական օրդինատորների վրա, բացառությամբ Հայաստանի Պաշտպանության նախարարության պատվերով սովորած ինտերների.

դ) մասնագիտացող բժիշկների վրա.

ե) Համալսարանում ժամանակավոր կցագրվածների վրա.

զ) մեկից ավելի կրթական համակարգերում, այդ թվում Համալսարանի անընդհատ և ինտեգրված բարձրագույն բժշկական կրթական ծրագրով սովորող կամ բակալավրում սովորող կամ մագիստրատուրայում սովորող և միաժամանակ կլինիկական օրդինատուրայում սովորողների վրա:

19. Սույն կանոնակարգով չնախատեսված ուսման վճարի փոխհատուցման բացառություններ կարող են սահմանվել ռեկտորի որոշմամբ՝ մինչև 30 տոկոսի չափով, մեկ ուսումնական տարով: Առանձնահատուկ և սույն կանոնակարգով չնախատեսված դեպքերում ուսման վճարի փոխհատուցման բացառություններ կարող են սահմանվել ռեկտորի կամ ռեկտորատի որոշմամբ, մեկ ուսումնական տարով:

20. Սույն կանոնակարգով, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանված տվյալ ուսումնական համակարգի գեղջի մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է գեղջի առավելագույն չափը:

21. Սույն կանոնակարգով նախատեսված փոխհատուցումներին հավակնելու դեպքում ուսանողը ներկայացնում է դիմում ռեկտորի անունով, անձը հաստատող փաստաթուղթ, ՄՈԳ-ի վերաբերյալ տեղեկանք ֆակուլտետի դեկանատից և տվյալ գեղջին առնչվող հետևյալ փաստաթղթերը.

1) Ուսումնառության տարիներին առանց ծնողական խնամքի մնացած (երկկողմանի ծնողագուրկ) սովորողներ՝

ա) ծնողների մահվան վկայականների բնօրինակները և պատճենները և(կամ) որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառված լինելու մասին փաստաթուղթ,

բ) ուսանողի ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը:

2) Միակողմանի ծնողագուրկ (միածնող) ուսանողներ՝

ա) ծնողի մահվան վկայականի բնօրինակը և պատճենը կամ դատարանի վճիռը, եթե ծնողը ճանաչվել է անհայտ բացակայող կամ միայնակ մայր լինելու կարգավիճակը հաստատող իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի (Ձև 1) բնօրինակը և պատճենը:

բ) ուսանողի ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը:

3) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ դարձած ուսանողներ՝ *հաշմանդամության կարգը հաստատող տեղեկանքի բնօրինակը և պատճենը:*

4) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներ՝

ա) ծնող(ներ)ի հաշմանդամության կարգը հաստատող տեղեկանքի բնօրինակը և պատճենը,

բ) ուսանողի ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը,

գ) պետական շիպոր մարմնի կողմից տեղեկանք:

5) Սոցիալական նպաստառու ընտանիքների ուսանողներ՝

ա) սոցիալական պետական ծառայության տարածքային բաժնից տեղեկանք, որտեղ նշվում է ընտանիքի նպաստառու լինելու հանգամանքը և անապահովության գնահատման միավորը,

բ) տեղեկանք իրավասու մարմնի (կազմակերպության) կողմից՝ ընտանիքի կազմի վերաբերյալ:

Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը յուրաքանչյուր տարի բուհին է ներկայացնում մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 10-ը:

6) Երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներ՝

ա) երեխաների ծննդյան վկայականների բնօրինակները և պատճենները,

բ) տեղեկանք իրավասու մարմնի (կազմակերպության) կողմից՝ ընտանիքի կազմի վերաբերյալ,

գ) տեղեկանք հանապատասխան բուհից՝ վճարովի համակարգում սովորելու մասին:

7) Մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներ՝ երեխայի ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը:

8) Պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և մարտական հերթապահություն իրականացրած սովորողներ՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից օրենքով սահմանված կարգով արձակվող և ծառայության ընթացքում մարտական հերթապահության մեջ ընդգրկված զինծառայողների զինվորական գրքույկների 7-րդ մասում «Հայրենիքի պաշտպանի անհատական գրքույկներում» և հաշվեծառայողական քարտերում գրառում՝ «Իրականացրել է մարտական հերթապահություն»՝ սահմանված կարգով վավերացված:

9) 2016 թվականին ապրիլյան քառօրյա մարտական գործողություններին մասնակցած սովորողներ՝ զինվորական գրքույկների «Նշումներ» մասում գրառում 2016 թվականին ապրիլյան քառօրյա մարտական գործողություններին մասնակցելու վերաբերյալ՝ սահմանված կարգով վավերացված:

10) ԵՊԲՀ աշխատողների երեխա սովորողներ՝

ա) տեղեկանք ԵՊԲՀ-ի Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնից՝ ծնողի ԵՊԲՀ-ում աշխատող հանդիսանալու և աշխատանքային ստաժի վերաբերյալ,

բ) ուսանողի ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը:

11) չարորակ նորագոյացությամբ հիվանդություններ ունեցող սովորողներ՝ հիվանդությունը հավաստող փաստաթուղթ, պատշաճ վավերացված բուժհաստատության կնիքով և ղեկավարի ստորագրությամբ:

Սույն կետով նշված փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են պատճենների հետ դրանց համապատասխանությունը ստուգելուց հետո:

22. Համալսարանը տվյալ տարվա ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցման տրամադրման վերաբերյալ մինչև հաջորդ տարվա ապրիլի 1-ը հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարությանը:

23. Սույն կանոնակարգը տարածվում է 2019 թվականի սեպտեմբերի 1-ից ծագող իրավահարաբերությունների վրա:

* * *